

ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ
 ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

XIX դարի առաջին երեսնամյակում Անդրկով-
 Ջասր Ռուսաստանի հետ միավորվելու հետևան-
 քով նոր զարգացում է բացվում հայ և ռուս ժո-
 ղովորդների արդեն իսկ բավական երկար ըն-
 թացք ունեցած փոխհարաբերությունների պատ-
 մության մեջ: XIX դարի 30-ական թթ. նշանու-
 վորվեցին նաև այդ փոխհարաբերությունների
 գիտական ուսումնասիրության անդրանիկ փոր-
 ձերով, որոնց արգասիքն էր, մասնավորապես,
 150 տարի առաջ՝ Մոսկվայում կազարյան ճե-
 մարանի նորաստեղծ տպարանում լույս ընծայ-
 ված «Собрание актов, относящихся к обо-
 зрению истории армянского народа»
 վավերագրեր և բազմաբնույթ պատմողական այլ
 էջաթեր ընդհանրակող փաստառատ ժողովածուն:
 Այն կոչված էր լրացնելու և հիմնավորելու
 Ս. Գլինկայի 1832—1833 թթ. հրատարակած
 երկհատոր ուսումնասիրությունը², որը ռուս ըն-
 թեցողներին հայ ժողովրդի պատմությանը ծա-
 նոթացնող առաջին հիմնավոր աշխատանքն էր
 ռուսական պատմագրության մեջ: Ժողովածուի
 մեկ շնորհիվ՝ նյութերի զգալի մասը Ս. Գլին-
 կայի տրամադրության տակ էր դրվել կազար-

յան ճեմարանի տնօրինության կողմից՝ և դրանց
 հրատարակությունը դիտվում էր որպես Ս. Գլին-
 կայի աշխատության հավելված՝ հերթական հա-
 տորների տեսքով:

Ժողովածուի երեք մասերում ընդգրկված
 պատմական նյութերը խմբավորված են 11 բա-
 ժինների մեջ, որոնցից I—VII բաժինները ներ-
 կայացված են I, VIII բաժինը՝ II, իսկ IX—
 XI բաժինները՝ III մասի մեջ: Երեք մասերի
 համար գրված մեկ ընդհանուր համառոտ առա-
 ջաբանում, որը կցված է I մասին, շեշտված է
 հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության
 անհրաժեշտությունն ու կարևորությունը և նուս
 հետազոտման հրատապությունը:

Ժողովածուի առաջաբանի հեղինակները իրա-
 վացիորեն գտնում էին նաև, որ հայ ժողովրդի
 պատմությունը պետք է արժանանա ռուս պատ-
 մագրության հատուկ ուշադրությանը հատկա-
 պես այն ժամանակից սկսած, երբ «Ռուսաստա-
 նի ընդերքում ծագեցին հայկական նշանավոր
 գաղթավայրերը, և այն ժամանակից, երբ հին
 Հայաստանի մի զգալի մասը՝ Արարատյան աշ-
 խարհը, միացվեց» Ռուսաստանին³: Ժողովա-
 ծուի կարևորությունը մեծ էր նաև նրանով, որ
 այն հայ ժողովրդի պատմության վերաբերյալ
 սպազա հատուկ ուսումնասիրությունների երհ-
 վան գալուն նպաստելուց բացի կոչված էր դադ-
 նայու քաղաքացիական կյանքում ընթացիկ գոր-
 ծավարության համար առաջին ամբողջական տե-
 ղեկատուն: Այդ նկատառումով է կազմված ժո-

1 Ժողովածուի I և II մասերը հրատարակու-
 թյան են հանձնվել և ստորագրվել տպագրության
 1833 թ. փետրվարի 17-ին, որոնցից առաջինը
 լույս է տեսել 1834, իսկ երկրորդը՝ 1838 թ.: Ա-
 ռաջին մասի տիտղոսաթերթի վրա որպես հրա-
 տարակության թվական նշված է 1833-ը, որը
 այդպես էլ մտել է գիտական շրջանառության
 մեջ: 1834 թ. լույս տեսնելու մասին է վկայում
 I մասի (էջ 381—391) «прибавление к 1-ой
 части» վերնագիրը կրող հատվածը, որի մեջ
 ներկայացված վավերագրերից վերջինը թվա-
 գրված է 1834 թ. մայիսի 16-ով: Ժողովածուի
 3-րդ մասը գտաբնությունը հրատարակության է
 թույլատրել 1836 թ. հոկտեմբերի 16-ին և լույս
 է տեսել 1838 թ.:

2 С. Н. Глинка. Обзорне истории
 армянского народа от начала бытия его до
 возрождения области Армянской в Росии-
 ской империи. Ч. I—II, М., 1832—1833.

3 «Собрание актов, относящихся к обо-
 зрению истории армянского народа». Ч. I,
 М., 1833, с. II.

4 Նույն տեղում, с. VII. «В целом обзорне
 армянской истории с приложением рзз-
 личных актов, составляет всего 5 частей,
 удовлетворяющих любопытству и знанию.
 В первых двух частях заключается соб-
 ственно обзорне армянской истории, а в
 следующих 3-х—собрание актов, разделен-
 ное на 11 отделов».

5 Собр. актов..., I, с. I.

ղովածուի բաժինների մեծ մասը Այսպես, առաջին մասի I բաժնում (էջ 3—42) հրատարակվել են 1830 թ. լույս տեսած «Новое обозрение законов»-ից բաղված հայերի մասին և կամ հայերին ևս վերաբերող նյութերը (1667—1825 թթ.): II բաժնում (էջ 43—66) հավաքված են Սենատի և Ակադեմիայի տեղեկագրերում հրատարակված հայերին վերաբերող կառավարական որոշումները (1711—1832 թթ.): III բաժնում (էջ 67—89) ներկայացված են «Полное собрание законов» հավաքածուի «Այբբենական ցանկից» հանված հայերին վերաբերող մասերը (1649—1825 թթ.), իսկ IV բաժնում (էջ 90—141)՝ նույն հավաքածուի «Ժամանակագրական ցանկից» բաղված մասերը (1672—1829 թթ.): Առանձնապես մեծածառն է V բաժնում (էջ 142—326. XVII—XIX դդ. հայ-ռուսական հարաբերությունների պատմության համար կարևոր նշանակություն ունեցող վավերագրերի հրատարակությունը (1667—1832 թթ.): VI—VII բաժիններում (էջ 327—379) հրատարակված է Ռուսաստանի արտաքին գործերի պետական կոլեգիայի Մոսկվայի արխիվում պահվող հայերին վերաբերող վավերագրերի ցանկը: Ժողովածուի վերջում, «Հավելումներ I մասի» վերնագրի տակ, կցվել են հրատարակության ընթացքում հայտնաբերված և նորաստեղծ որոշ վավերագրեր (1813—1834 թթ.):

Ժողովածուի II մասն ամբողջությամբ (504 էջ) նվիրված է VIII բաժնի նյութերին. այնտեղ ընդգրկված են հայ ժողովրդի պատմությանն առընչվող տպագիր գրականությունից, տարբեր ուղեգրություններից ու հանրագիտարաններից բաղված հատվածներ և դեռևս ձեռագիր վիճակում գտնվող մի շարք վավերագրեր: Այս բաժնում առանձին հետաքրքրություն են ներկայացնում հայ-ռուսական պատմաբաղաբական ու սոցիալատնտեսական կապերի, սյարսկահայերի գաղթի կազմակերպման ու իրականացման շուրջ եղյուս վավերագրերը, Հայաստանի և, մասնավորապես, Հայկական Մարզի պատմական ու աշխարհագրական նկարագրության շուրջ հրատարակված նյութերը: Որոշ նյութեր, որոնք վերցված են եվրոպական հրատարակություններից, զետեղված են բնագրերով կամ ռուսերեն լուսագրերով թարգմանությամբ:

Ոչ պակաս հարուստ և արժեքավոր է նաև ժողովածուի III մասը, որտեղ ընդգրկված են IX—XI բաժինները: IX բաժնի նյութերն ու վավերագրերը ամբողջությամբ նվիրված են լազարյան ձեռագրանի անհրաժեշտության, նրա հիմնադրման, կառուցվածքի ու գործունեության պատմության լուսաբանման հարցերին: X բաժնում ներկայացված են հայ մատենագրության պատմության մասին ժամանակին արդեն իսկ հրատարակ-

րակի վրա եղած նյութերն ու տարբեր ուսումնասիրությունների կարևոր դիտված հատվածները: Արժեքավոր են հայկական պոեզիային ու պատմագրությանը նվիրված հոդվածները, հայ մատենագիրների և Հայաստանի ու հայերի մասին վկայություններ պարունակող ռուսերեն ու եվրոպական լեզուներով առկա գրականությունն ու հեղինակներ, ցանկը, հայոց լեզվի ու մատենագրության ուսումնասիրության անհրաժեշտությունը հիմնավորող հոդվածները, ռուսական ծառայության մեջ եղած հայերի ցուցակը (XVIII—XIX դդ. I երեսնամյակ) և այլն: Առանձնակի արժեք ունեն XVIII դարի II կեսի և XIX դարի I երեսնամյակի հայ-ռուսական հարաբերությունների մասին վավերագրերը և ժողովածուն էզրափակող վիճակագրական աղյուսակները:

Կարևոր է նշել, որ ժողովածուի մեջ տեղ են գտել ոչ միայն տպագիր, այլև դեռևս անտպագրործերի մասին հաղորդումներ: Այսպես, ժողովածուի մեջ է առաջին անգամ արձանագրված Մկրտիչ էմինի կողմից Պուշկինի երկերի թարգմանությունների փաստը. «Մկրտիչ էմին, արևելյան լեզուների Մոսկվայի հայկական լազարյան ձեռագրանի սան, ուղարկված այս ձեռագրանը շնորհակաստանի Կալկաթա քաղաքից կրթություն ստանալու համար, ռուսերենից հայերեն շարժաթարգմանել է Ա. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» և «Կովկասյան գերին» երկը: Այս թարգմանությունները շուտով լույս կտեսնեն և այն ժամանակ նատրվանի և Գերայի ճրգիչը հայտնի կդառնա հայերով բնակված Ասիայի զանազան երկրներում»:

Ժողովածուի պարունակած նյութերի ու վավերագրերի մի մեծ մասը առդեն ունեցել է գիտական ավելի բարձր մակարդակ ապահովող հրատարակություններ, սակայն ժողովածուն իր մի զգալի մասով մնում է հայագետների և, մասնավորապես, հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը վերաբերող մասնագետների ուշադրության կենտրոնում XVIII—XIX դդ. պատմությունն արտացոլող մի շարք վավերագրերի դեռևս սխալ հրատարակությունը լինելու շնորհիվ:

Ժողովածուն հսկայական դեր է խաղացել ռուսահայկական հարաբերությունների ուսումնասիրության գործում, որի նյութերը լայնորեն օգտագործել են նշված հարցի շուրջ հետազոտություններով հանդես եկած նշանավոր շատ պատմաբաններ:

Վ. Լ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ,
Պ. Ա. ՉՈՒԿԱՆՅԱՆ